տալով պետական աջակցութիւն քաղաքային ինքնավարութեան հիմնարկութիւններին և նրանց միութիւններին՝ իրենց քաղաքային և տնտեսական ձեռնարկութիւնների մէջ։

Կառավարութիւնը ամէն կերպ պիտի աջակցի կооպերատիւներին, ամէն տեսակի միութիւններին՝ այս ձևով խրախուսելով ժողովրդական նախաձեռնութիւնը գիւղատնտեսութեան և տնայնագործական արդիւնաբերական վարկի շրջանում։

Արդարադատութեան գործը ամուր հիմքի վրա դնելու համար կառավարութիւնը մտցնում է դատարաններում ընտրական սկզբունքը։ Դատավարութիւնը պէտք է հանրամատչելի լինի դատական ծախսերի տեսակէտից։ Գործավարութիւնը դատարանում պէտք է տարուի պետական լեզուով, դատավարութիւնը՝ մայրենի։

Երկիրը արտաքին թշնամիներից պաշտպանելու համար պիտի յենուի որոշ հասակի պարտադիր զինուորական ծառայութեան վրա։ Կազմակերպւում է ժողովրդական միլիցիա մշտական զօրքի փոխարէն։ Զօրքը պիտի ազգայնացուի։ Միլիցներ պիտի ձեռք առնեն զօրանոցների բաբելաման և զինուորների կեանքի առողջապահական պայմանների կարգաւորման վերաբերեալ։

Կառավարութիւնը ամէն միջոցներ ձեռք պիտի առնի Հայաստանի սահմաններից դուրս մնացած հայերի վերադարձը իրենց հայրենիքը փութացնել՝ նախօրօք երկրի ներսում ապահովելով նրանց գոյութիւնը և ստեղծելով յարմարութիւններ նրանց համար։

Առանձնապէս կառավարութիւնը պիտի ջանայ մինչև ձմեռ դադրեցնել նախկին տաճկահայ գաղթականներին իրենց հայրենիքը, հակառակ դէպքում ամէն կերպ պիտի ապահովէ նրանց։

Վերջապէս, հերթական հարց է դառնում վերականգնումը Հայաստանի աւերակների։ Այս գործի մէջ պիտի երևան դայ դաշնակիցների ակտիւ գործունէութիւնը։

Առաջադրելով ապագայ գործունէութեան այս ծրագիրը, որի հիմունքներն ու կէտերը ես այստեղ ընդգծեցի, նոր կառավարութիւնը յայտարարում է, որ նա յամառօրէն պիտի ձգտի իրականացնել այն՝ հիմնուելով օրինականութեան վրա»։

Ցաջորդ նիստերում, այս յայտարարութիւնը առնուեց քննութեան և ընդունուեց հակառակ սոց.—յեղ. և անկուսակցական գիւղացիական պատգամաւորների քէֆերի։ Ընդդիմադիրների կողմից Ա. Խոնդկարեանը երկար ու մանրակրկիտ վերլուծութեան ենթարկեց կառավարութեան յայտարարութիւնը՝ կանգ առնելով Հայաստանի պետականութեան թերի կողմերի վրա։

Ապա, Խորհրդարանն ու կառավարութիւնն անցան իրենց հերթական աշխատանքներին։

*

Ազգ. Պատիրակութեան առաքելութիւնը Երևան հասաւ հոկտեմբերի կէսերին։ Նա բաղկացած էր Վ. Թեքէյեանից (նախագահ) և դր. Ն. Տէր Ստեփանեանից ու Սամ. Ցարութիւնեանից։ Այս վերջինի մասնակցութիւնը Ազգ. Պատիրակութեան առաքելութեան մէջ՝ զարմանք ու դժգոհութիւն առաջ բերեց Երևանում։

Քանի որ նոյն օրերին Երևանում գումարուած էր Հ. Ց. Դ. Ցրդ Ընդհ. Ժողովը, Ազգ. Պատիրակութեան հետ բանակցելու հարցն էլ տրուեց նրա